

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կ. ՊՕԼՍՈՅ ՉԸՅՆ

(1877).

Քաղաքական ժողովն իւր Եռւիս 6-ի նստի մէջ, զրազեցաւ փակեալ Շահնազարեան վարժարանի խնդրով, Լսեց այս մասին յառաջագոյն կարգեալ մասնախմբին տեղեկագիրն, և որոշեց սա իմաստով նամակ մը գրել Ա. Զուլեյք Էֆէնտիին, որ Նուպար փաշայի փոխանորդն է այս խնդրոյ մ'ջ. — Քաղաքական ժողովը Շահնազարեան վարժարանի ելեւմտից խառնուիլ չուզեր, ինչպէս չէ ուղած ի սկզբանէ անտի. և այդ հաստատութեան պարտուց կարգադրութիւնը կը վերապահէ Նուպար փաշային և անոր փոխանորդին, նկատելով սակայն որ հոգեւորոյ Շահնազարեան Պարապետ վարդապետ 1000 ռսկի զրամագլխով գիշերօթիկ վարժարան մը հիմնելու համար կտակ ըրած է, Ազգ. Վարչութիւնն իւր պաշտօնի ընտրութեամբ և Սահմանադրութեան բացորոշ տրամադրութեամբ պարտաւոր է հսկել ազգային կտակաց գործադրութեան, Ուստի, կը յանձնարարէ Զուլեյք Էֆէնտիին տեղեկութիւն տալ թէ Շահնազարեան վարդապետի կտակին գործադրման համար, որուն կտակարար ետեւած է Նուպար փաշա, ինչ միջոցներ տնօրինուած են, Ի մի բան, Ազգ. Վարչութիւնը չուզեր մտնել փակեալ վարժարանի ելմտական կացութեան, այսինքն գոյացած պարտուց և անոնց փոխարէն վարժարանին դրամագլուխը կազմող քոնսուլիտներուն զրաւի ենթարկման և գրեթէ փճացման վերաբերեալ կնճառից և ցաւառիթ խնդրոց մէջ, այլ կը պնդէ Շահնազարեան վարդապետի կտակին գործադրման վերայ, Առիթ պիտի ունենանք մասնաւոր կերպիւ խօսելու այս կարեւոր խնդրոյ վերայ, Ժողովն ինչ ինչ մասնաւոր գործոց քննութեամբ զբաղելէ յետոյ, շարունակեց խորհրդակցիլ ելմտացոյցի խնդրոյն վերայ, առանց եզրակացութեան մը յանգելու:

— Խառն ժողովն, որ մի քանի շաբաթէ ի վեր չէր գումարուած, իւր նոյն աւուր նստի մէջ, տեղեկանալով Խորէն եպիսկոպոսին Մալաթիայէ քաշած մէկ հեռագրէն, թէ տեղւոյն ազգ. ժողովները վերակազմուած են, Մալաթիոյ առաջնորդական տեղապահ կարգից Տէրունեան Տ. Մաղաքիա վարդապետը, Մանճրլըիսի վիճակին ազգայիները բաւական ժամանակէ հետէ բոլորովին անխնամ և անիշխանական կացութեան մը մ'ջ գրտնուելով, ժողովը զրեց Սերաստիոյ առաջնորդին որ անձամբ հոն երթալ, ազգ. ժողովները կազմէ, և իրաց վիճակը տեղեկագրէ Ազգ. Վարչութեան, Ժողովը կատարեց նաև Դատաստանական խորհրդոյ ինչ ինչ ամուսնական վճռագրոց դէմ պահանջուած վերաքննութիւնն, և հաստատեց զանոնք:

Քաղաքական ժողովն իւր Յուլիս 13 ի (և վերջին) նստի մէջ, լսեց Աւլանեան Ստեփան փաշայի մէկ տեղեկագիրն Եգիպտոսի ազգ. կալուածոց հին խնդրոյն վրայ, ն. Աւսեմութիւն ծանուցած լինելով թէ տեղւոյն ազգ. սնտուկը տարապայման անձկութեան մէջ կը գտնուի, և կալուածոց գրաւի ենթարկման պատճառաւ իրաց փիճակն հետզհետէ կը ծանրանայ, և կարգադրութեան համար իրաւախոհութիւն մը առաջարկած լինելով, ժողովն իւր ատենն հրաւիրեց նախորդ առաջնորդ Մեսրոպ սրբազանն, և յետ բանակցութեան, նկատելով թէ այդ կալուածոց գրաւումն, որ Միջազգային դատարանէն հաստատեալ է, ծանրագոյն հետեանք կրնայ ունենալ, և թէ արդէն ազգ. հաստութից մէկ մասը գանձուած են պարտատեարց՝ Եուսուֆ Կիւզէյի և Մուհամմէտ Ալիի Ալաթի կողմէ, մի մասն ալ կը փճանայ, և նկատելով թէ այս օտարազգիք կը նեղեն տեղական վարչութիւնը, Քաղ. ժողովը բանաւոր գտաւ Ստեփան փաշայի առաջարկած իրաւախոհութիւնն, և ըստ այնմ՝ պարտատեարց պահանջքը զեղչելով, ապահովութիւն ստացաւ Մեսրոպ սրբազանէն, որ այդ պարտատեարց վրայ բարդական ազդեցութիւն մ' ունի, որպէս զի հաճեցնէ պարտաւերներն, և խնդիրն այսպէս փակի յօգուտ Եգիպտոսի ազգ. սնտուկին:

Ժողովն զբաղեցաւ նաև Ազգ. Հիւանդանոցի վերաբերեալ Աւագրֆի խնդրով մը, Բայց իւր ժամանակի մեծագոյն մասն Եգիպտոսի խնդրոյն զոհած լինելով, չկրցաւ զբաղիլ Պատրիարքարանի ելմտացոյցի խնդրովը:

Տնտեսական խորհուրդը Քաղ. ժողովոյ սոյն նստին ներկայեց ի փաւերացում՝ Սամաթիոյ հրկիզեալ Ս. Պէորգ եկեղեցւոյն վերաշինութեան յատակագիծը, զոր ատենապետ Մ. Սեթեան էֆ. ազգ. ճարտարապետաց ոմանց հետ պատրաստած էր, նորակառոյց եկեղեցին պիտի ունենայ նախորդին ընդարձակութիւնն, 52 կանգ. երկայնութիւն, 28՝ լայնութիւն և 15 կանգ. բարձրութիւն, 6000 ոսկւոյ ծախք մը պիտի լինի, որ մեծ մասամբ ապահովուած է:

Կրօնական ժողովն, որոյ ատենապետը՝ Մինթանճեան Գրիգոր եպիսկոպոս, հտ առած է իւր հրաժարական, նոյն օր ինչ ինչ ընթացիկ գործովք պարապեցաւ:

Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը նամակաւ մը ծանոյց Ուսումնական խորհրդին թէ այդ յարկի մէջ Որբանոցի աշակերտաց համար Արհեստանոց մը հաստատելու մասին Խորհրդին շինած ծրագիրն բնորոշուած է, ճանչելով անոր ստիպողական պէտքը, բայց Հիւանդանոցի ներկայ ելմտացոյցն օրինաւոր արհեստարանի մը պատրաստութեան միջոցները չտար. ուստի, այդ ծրագրի գործադրումն յետաձգուած է ի հարկէ ստիպեալ, և որոշուած է շատանալ Որբանոցին կրթական փիճակին բարւոյնմամբ ու ընդարձակմամբ, հիմ բռնելով Ուսումնական խորհրդոյ յայտարարին, հոգաբարձութիւնը կը խնդրէր վաւերել ուսմանց

մանրամասն ծրագիր մը, զոր Որբանոցի ուսուցչական մարմինը պատրաստած էր:

Այս նիւթոց վրայ խորհրդակցելու համար, Ուսումն. խորհուրդն Յունիս 21-ին Հիւանդանոցի հոգաբարձութեան հետ համագումար նիստ մ'ըրաւ: Հոգաբարձութիւնն աւելի մանրամասնաբար յայտնեց ինչ որ իւր նամակաւ ըսած էր: Ի վերջոյ որոշուեցաւ առ այժմ՝ յետաձգել Արհեստարանի հաստատումը: Խորհուրդն ապահովցուց Հոգաբարձութիւնը թէ Որբանոցին կրթական մասին նկատմամբ իւր հսկողութիւնն ու հոգատարութիւնն անպակաս պիտի ընէ:

Ս. Երուսաղէմի վանուց 1882—83 տարւոյ հաշուեցոյցը և 1883—84 տարւոյ ելմտացոյցը հասած լինելով, Աղգային Ժողովոյ յառաջիկայ նստին պիտի ներկայացուի: Հաշուեցոյցէն կը հասկցուի թէ Ս. Երուսաղէմի վանքը անցեալ տարւոյ մէջ 2500 ոսկի բաց ունեցած է: Իբր 1000 ուխտաւոր գացած են յԵրուսաղէմ, որոնցմէ հազիւ 1500 ոսկի զարպասական հասոյթ գոյացեր է:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ախալցխայից հաղորդումն. Մեծապատիւ մահտեսի Աարդան Աղա Աարդանեանց, որ մտադիր էր Շուշանեան Օրիորդական դպրոց բանալ, այժմ ոչ միայն իւր այդ մտադրութիւնը չէ կամենում իրագործել, այլև կամենումէ տեղւոյն իւր հիմնած տղայոց դպրոցն էլ փակել, վշտացած լինելով անտեղի լրագրական յարձակումներէրից, որոնցով որպէս թէ շօշափելիս են եղել ոմանք յիշեալ Պարոնի անձնասիրութիւնը:

26նք կարծում որ Աարդան Աղայի պէս մարդը իւր բարեգործութեան մէջ տատանուի յիշեալ պատճառով: Եթէ յարձակումները արդարացի են, թող Պարոնը օգուտ քաղէ. իսկ եթէ անարդարացի՝ թող բամբասանք համարէ և նշանակութիւն չըտայ, եթէ մարդիկ չըզնահատեն, Աստուած կըտեսնէ և վարձահատոյց կըլինի:

Օգոստոս և Սեպտեմբեր ամսատետրակների «Ա. Պօլսոյ ձայն» վերնագրով բաժինը Արարատի մէջ շատ աղքատ է. գորա պատճառն է այն, որ այդ բաժինը կազմվում է Աղգային Ժողովի վարչութեանց որոշումները արտատպելով Ա. Պօլսոյ լրագրներից. իսկ այդ լրագրների ու Թիֆլիզի հայ մամուլի լղթակիցների նկարագրութեամբ՝ Աղգային Ժողովի նստերը ունեցել են այնպիսի երևոյթ, որոնց աւելի հեշտ կատակերգական ներկայացում պէտք է համարել քան Աղգային Ժողովոյ նիստ: Այդ ցաւալի երևոյթը աւելի նկատելի եղել է Օգոստոսի 5ի Ժողովում, որի երեք արարուածների վարագոյրը իջել է բարապանների